



ՀՀ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԸ

Հասմիկ Հարությունյան

*Իրավունքների պաշտպանություն
առանց սահմանների*

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն ուսումնասիրությունը անդրադառնում է ՀՀ դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությանն ու դրանից բխող գործողությունների ծրագրին: Ուսումնասիրությամբ անդրադարձ է կատարվել ինչպես 2019–2023 թթ, այնպես էլ 2022–2026 թթ ռազմավարությանը, նախատեսված գործողությունների կրկնություններին ու չկատարված միջոցառումներին:

Առանձնակի ուշադրություն դարձվել է ռազմավարությամբ առաջ քաշված դատական համակարգի բարեփոխումների շարունակականության ապահովման ուղղությանը և դրա ներքո տեղ գտած առանձին հարցերի: Մասնավորապես, որպես այդպիսիք ուսումնասիրության մեջ քննարկվել են Բարձրագույն դատական խորհրդի ձևավորման ու կազմի, վերջինիս կողմից դատավորներին պաշտոնի նշանակման և առաջխաղացման հետ կապված հարցերը, ինչպես նաև դատավորների կարգապահական պատասխանատվության հիմնահարցերը: Քննարկվել է նաև ՀՀ-ում վերջերս ներդրված բարևարքության ստուգման համակարգն ու դրա հետ կապված բացերը:

Ուսումնասիրությամբ վեր հանված խնդիրների առնչությամբ ներկայացված են նաև համապատասխան առաջարկություններ:

ՆԱԽԱԲԱՆ

Դատական իշխանության անկախությունն ու արդյունավետ գործունեությունը իրավունքի գերակայության զարգացման և ժողովրդավարության ամրապնդման կարևորագույն նախապայմաններից է, ինչը շարունակում է արդիական մնալ նաև Հայաստանի Հանրապետության համար:

2018 թվականի հեղափոխությունից/քաղաքական փոփոխություններից/ հետո դատաիրավական ոլորտի բարեփոխումները և, մասնավորապես, դատական իշխանության անկախության ապահովումը ժողովրդավարությանն ուղղված օրակարգի բարեփոխումների մեջ կենտրոնական դեր էին զբաղեցնում: Այս նպատակով Կառավարության կողմից առաջ քաշվեցին դատաիրավական ոլորտին ուղղված մի շարք բարեփոխումներ, որոնք սակայն, մինչ օրս լիարժեքորեն կյանքի կոչված չեն: Այս առումով պետք է նշել, որ հիմնական բացթողումներից մեկը ի սկզբանե խոստացված վեթինգի տապալումն էր: Ինչը կարելի է բացատրել մի քանի պատճառներով, այն է՝ համակարգային փոփոխությունների և համալիր քայլերի պլանավորման բացակայություն, երկարաժամկետ և կարճաժամկետ գործողությունների բացակայություն, մարդկային անհրաժեշտ ռեսուրսների և կարողությունների բացակայություն, դատական համակարգի ներսում առկա դիմադրություն, ինչպես նաև միջազգային կառույցների մոտեցումներն ու պահանջները:

Չնայած նշված և առկա մի շարք այլ խնդիրներին, վերջին երեք տարում ՀՀ Կառավարության կողմից ձեռնարկվել և շարունակվում են իրականացվել գործողություններ՝ ուղղված դատական իշխանության անկախության ամրապնդմանը:

Այն մեծապես տեղ է գտել Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրերում:

Սույն ուսումնասիրությամբ անդրադարձ կկատարվի վերջին երեք տարում ՀՀ-ում իրականացված դատական և իրավական բարեփոխումների ծրագրերին, դրա շրջանակներում հիմնական ձեռքբերումներին ու բացթողումներին, ինչպես նաև ոլորտում կատարված և կատարվող այլ փոփոխություններին:

Ներկայացված տեղեկատվությունը բխում է ՀՀ և Եվրոպական Միության միջև գործող Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի՝ ներքին բարեփոխումներին առնչվող պահանջներից; մասնավորապես, համաձայնագրով դատական և իրավական բարեփոխումների հետագա առաջընթացի ապահովմանն ուղղված պահանջներից:

2019–2023 ԵՎ 2022–2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

2019 թվականի հոկտեմբերի 10–ին ՀՀ Կառավարության կողմից ընդունվեց Դատական և իրավական բարեփոխումների 2019–2023 թվականների ռազմավարությունն ու դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին որոշումը¹:

Ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրերի վերջնականատակն էր դատարանների և արդարադատության համակարգին առնչվող պետական ինստիտուտների վերակառուցումը անկախության և հաշվետվողականության չափանիշներով, ինչն անհրաժեշտ է ժողովրդավարական պետության զարգացման համար: Ըստ ռազմավարության՝ դատական համակարգը պետք է լիարժեք անկախանա, որպեսզի կարողանա դառնալ հավասարակշռող ուժ իշխանության մյուս ճյուղերին²:

Ռազմավարությունը, սակայն, կյանքի չկոչվեց և նախատեսված մի շարք գործողություններ մնացին անկատար, ինչը բացատրվեց այնպիսի օբյեկտիվ հանգամանքներով, ինչպիսիք էին Քովիդ–19 համավարակն ու 2020 թվականի Սեպտեմբերի 27–ին Ադրբեջանի կողմից Հայաստանի և Արցախի դեմ սանձազերծված լայնածավալ պատերազմը:

2022 թվականի հուլիսի 21–ին ՀՀ Կառավարության կողմից ընդունված որոշմամբ հաստատվեց ՀՀ Դատական և իրավական բարեփոխումների 2022–2026 թվականների ռազմավարությունն ու դրանից բխող գործողու-

1. ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ Դատական և իրավական բարեփոխումների 2019–2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135487>

2 Հավելված n 1 ՀՀ Կառավարության 2019 թվականի կառավարության հոկտեմբերի 10–ի n 1441–I որոշման, Ռազմավարություն Հայաստանի Հանրապետության Դատական եվ Իրավական բարեփոխումների 2019–2023 թվականների

թյունների ծրագիրը³: Պետք է նշել, որ ընդունված ռազմավարության մեջ նույնությամբ տեղ գտան մի շարք ռազմավարական ուղղություններ և գործողություններ, որոնք անկատար էին մնացել 2019–2023 թվականների ռազմավարությամբ:

Մասնավորապես, դատական և իրավական բարեփոխումների 2022–2026 թվականների ռազմավարության մեջ տեղ են գտել թվով ընդհանուր 12 ռազմավարական նպատակներ, որոնց մեջ առանձին նպատակներ նույնությամբ բխում են 2019–2023 թվականների ռազմավարությունից: Դրանցից են, օրինակ, էլեկտրոնային արդարադատության զարգացումը երկրում, անցումային արդարադատության իրականացումը, քրեական և քաղաքացիական ոլորտի բարեփոխումները և այլն:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում շարունակվում են դատաիրավական բարեփոխումների 2022–2026 թվականների ռազմավարությունից բխող փոփոխությունները: Ռազմավարությունից ուղղակիորեն բխող գործողությունները, ինչպես նաև ոլորտին առնչվող վերջին երեք տարվա ընթացքում տեղի ունեցած զարգացումները կքննարկվեն ստորև:

3 Հայաստանի Հանրապետության Դատական եվ Իրավական Բարեփոխումների 2022–2026 թվականների Ռազմավարությունը եվ դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու եվ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10–ի n 1441–I որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166582>



ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԿԻՐԱՌՈՒՄ

2018 թվականից ի վեր այս բարեփոխումների մեջ կենտրոնական դեր ու պահանջարկ ունեցել է անցումային արդարադատության իրականացումը: Վերջինս ներկայումս ռազմավարության մեջ տեղ է գտել որպես առանձին ուղղություն՝ փաստահավաք գործունեության միջոցով մարդու իրավունքների համակարգային խախտումների բացահայտման անհրաժեշտությամբ:

Հատկանշական է սակայն, որ նախորդող երեք տարիներին այս առնչությամբ բավարար գործողություններ չեն ձեռնարկվել, չնայած որ 2019–2023թթ ռազմավարությամբ նախատեսված են եղել փուլային գործողություններ: Այդ ընթացքում միայն մասնակի կատարվել է մեկ գործողություն, մասնավորապես մշակվել է «Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգի և գործունեության մասին» օրենքի նախագիծը⁴: Այնուհետ, 2022–2026 թթ–ի ռազմավարության հաստատումից հետո երկար ժամանակ այս հարցի ուղղությամբ գործողություններ չեն ձեռնարկվել: Միայն 2023 թվականի օգոստոսին մշակվել է «Հանրային խորհրդի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը: Վերջինս նախատեսում է Հանրային խորհրդի շրջանակներում Փաստահավաք հանձնաժողովի ստեղծում՝ ուղղված 1991 թվականի սեպտեմբերից մինչև 2022 թվականը ներառյալ տեղի ունեցած՝ դեպքերի և իրադարձությունների շրջանակում կամ դրանց հետևանքով տեղի ունեցած՝ մարդու իրավունքների հիմնարար և պարբերական խախտումների վերաբերյալ փաստերի հավաքագրմանը և ուսումնասիրմանը⁵: Պետք է նշել, որ ի սկզբանե քաղաքացիական հասարակության կողմից պահանջ է եղել այս նպատակով ձևավորել նոր և անկախ մարմին, մինչդեռ պետության կողմից որդեգրվել է այլ մոտեցում:

⁴ https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_9548980704171_final-23.07.2020.pdf

⁵ «Հանրային խորհրդի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ <https://www.e-draft.am/projects/6153>

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Այս նպատակի ներքո տեղ են գտել՝

Սահմանադրական բարեփոխումների իրականացում,

Կայացած ընտրությունների ընթացքում ծագած եւ վերհանված խնդիրների միջոցով ընտրական օրենսդրության բարեփոխումը:

Սահմանադրական բարեփոխումների իրականացումը որպես առանձին նպատակ նախատեսված էր 2019–2023թթ ռազմավարությամբ: Որպես առանձին նպատակ նախատեսված էր նաեւ ընտրական օրենսդրության բարեփոխումը:

Դեռևս 2020 թվականին հաստատվել էր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը⁶, որը սակայն 2022–2026թթ ռազմավարության ընդունումից հետո ենթարկվեց փոփոխության:

2022 թվականին ձևավորվեց սահմանադրական բարեփոխումների նոր խորհուրդ, ինչպես նաև սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով⁷:

Սահմանադրական բարեփոխումներն ու մասնագիտական հանձնաժողովի և խորհրդի աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են⁸:

⁶ <https://www.moj.am/article/2623>

⁷ ՀՀ Վարչապետ որոշում, N 111-Ա, Սահմանադրական բարեփոխումների խորհուրդ ձևավորելու, խորհրդի անհատական կազմը և գործունեության կարգը հաստատելու և ՀՀ վարչապետի 2020 թ փետրվարի 12-ի որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=162268>

⁸ <https://www.moj.am/article/3774>

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Ռազմավարության կարևոր ուղղություններից մեկն է հանդիսանում դատական համակարգի բարեփոխումների շարունակականության ապահովումը, որի ներքո կարևորվել է՝

երաշխավորել արդարադատության արդյունավետության բարձրացման և դատական պրակտիկայի միասնականության ապահովումը, ինչպես նաև արդարադատության իրականացման ոլորտում սահմանել իրավական որոշակիության ավելի բարձր նշանձող, ապահովել դատական գործերի քննության ողջամիտ ժամկետների առավել լիարժեք պահպանման և դատավարական ժամկետների խնայողության սկզբունքի արդյունավետ իրականացման նպատակի իրացումը.

- ապահովել դատարանների մասնագիտացումների և դատավորների ենթամասնագիտացումների առկայությունն իրավունքի տարբեր ենթաօլորտներում, որի միջոցով մի կողմից կերաշխավորվի գործերի առավել մասնագիտական քննությունը, հատկապես երբ խոսքը վերաբերում է բարդ, համալիր իրավահարաբերությունների և նեղ մասնագիտական գիտելիքների կիրառություն պահանջող գործերի քննությանը, մյուս կողմից՝ հնարավորություն կստեղծի վերաբաշխելու դատական համակարգի ընդհանուր ծանրաբեռնվածությունը.
- բարձրացնել դատավորների թեկնածուների ընտրության գործընթացի օբյեկտիվությունը և հիմնավորվածությունը.
- ապահովել դատական համակարգում դատավորների վարձատրության շարունակական բարձրացումը՝ սկսած բարձր ատյաններից.
- ապահովել դատավորների բարեվարքության շարունակական ստուգումը.

- շարունակել դատարանների շենքային պայմանների բարելավման գործընթացը.

- և այլն:

Վերոնշյալին առնչվող ռազմավարությունից ուղղակիորեն բխող, միևնույն ժամանակ ռազմավարությունից չբխող, սակայն դատական ոլորտին առնչվող հիմնական զարգացումներն ու հիմնահարցերը ներկայացվում են ստորև:



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ: ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2015 թվականի ՀՀ Սահմանադրությամբ և 2018 թվականի ՀՀ Դատական օրենսգիրք Սահմանադրական օրենքով Բարձրագույն դատական խորհուրդը (հետայսու՝ Խորհուրդ) անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը⁹: Հատկանշական է, որ մինչ այս փոփոխությունները առկա օրենսդրական կարգավորումներով նախկինում գործող Արդարադատության խորհուրդը չի դիտարկվել որպես դատարանների անկախության երաշխավոր: Սահմանադրությամբ թեև նախատեսվում էր Արդարադատության խորհրդի գործունեությունը, սակայն դատական իշխանության անկախության երաշխավոր այն չէր հանդիսանում: Ըստ Սահմանադրության՝ դատարանների անկախության երաշխավորը դիտարկվում էր Հանրապետության Նախագահը¹⁰:

Առաջին ձևավորումից ի վեր խորհրդի առնչությամբ առա հիմնական խնդիրը կապված է եղել կազմի ձևավորման և մասնավորապես ոչ դատավոր անդամների ընտրության հետ: Ներպետական օրենսդրության համաձայն՝ խորհրդի հինգ անդամներին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող դատավորների կազմից: Բարձրագույն դատական խորհրդում պետք է ընդգրկվեն դատավորներ բոլոր ատյանների դատարաններից: Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատարանի նախագահ կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ: Խորհրդի հինգ անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական

⁹ ՀՀ Սահմանադրություն, հոդված 173, 2015թ
¹⁰ ՀՀ Սահմանադրություն, 1995 թվական

որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից:

Խորհրդի կազմում Ազգային ժողովի կողմից ոչ դատավոր անդամների ընտրությունը չնայած միջազգային ստանդարտներին համահունչ կարգավորում է, սակայն պրակտիկայում հանգեցրել է մի շարք դժգոհությունների: Նախ շարունակում է ոչ հստակ մնալ, թե ինչ չափանիշներով են թեկնածուները ընտրվում և ներկայացվում օրենսդրի քվեարկությանը: Մասնավորապես, հեղինակավոր իրավաբան եզրույթը բավականին լայն է օբյեկտիվ մեկնաբանության ենթարկելու համար: Ավելին, հստակ չէ, թե կոնկրետ որ ոլորտներից և ինչ չափանիշների հիման վրա պետք է ընտրվեն հեղինակավոր իրավաբանները; չկա նաև պահանջ քաղհասարակությունից անդամ ներգրավվելու վերաբերյալ:

Բացի այդ, ինչպես ցույց է տվել վերջին տարիների ընտրությունները, թեկնածուները ներկայացվել են հիմնականում իշխող ուժին հարող շրջանակներից և հետագայում Խորհրդարանում ընտրվել իշխող ուժի պատգամավորների կողմից, ինչը ընտրված ոչ դատավոր անդամների անկախության ապահովման տեսանկյունից մտահոգությունների տեղիք է տալիս:

Վերջին նման օրինակը, որը լուրջ դժգոհության և օբյեկտիվ քննադատության տեղիք է տվել, կապված է Խորհրդի կազմում որպես իրավաբան գիտնական անդամներ 2022 հոկտեմբեր ամսին ՀՀ արդարադատության նախկին նախարարի և վերջինիս տեղակալի ընտրության հետ¹¹: Խորհրդի սահմանադրորեն ամրագրված դերն է դատարանների և դատավորների անկախության երաշխավորումը, ինչի համար անհրաժեշտ է, որ վերջինս իր կազմով

¹¹ <https://armenpress.am/arm/news/1094275.html>
Հայտարարություն Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ <https://prwb.am/2022/10/06/%d5%b0%d5%a1%d5%b5%d5%bf%d5%a1%d6%80%d5%a1%d6%80%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6-%d5%a2%d5%a1%d6%80%d5%b1%d6%80%d5%a1%d5%a3%d5%b8%d6%82%d5%b5%d5%b6-%d5%a4%d5%a1%d5%bf%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6/>

ունենա քաղաքական չեզոքություն և զսպվածություն, ինչպես նաև անկախություն գործադիր ու օրենսդիր իշխանությունից: Մինչդեռ նման ընտրությունը, այն պարագայում, երբ Խորհրդի ընտրված անդամները հանդիսացել են գործադիր իշխանությունում քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք, կասկածի տակ է դնում Խորհրդի գործունեության անկախությունն, հետևաբար նաև դատական իշխանության անկախության ու անաչառության ապահովման սահմանադրական գործառույթը:

Հատկանշական է, որ դատական և իրավական բարեփոխումների 2022–2026թթ ռազմավարության *Դատական համակարգի բարեփոխումների շարունակականության ապահովում* ռազմավարական նպատակի ներքո կարևորագույն բաղադրիչ է դիտարկվել դատական իշխանության անկախության ապահովումը:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Գործող օրենսդրությունը սահմանում է Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունների բավականին լայն շրջանակ, ներառելով այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են դատավորների նշանակումը, առաջխաղացումը, լիազորությունների դադարեցումը, կարգապահական պատասխանատվության ենթարկելը, դատարանների ծախսերի նախահաշիվները հաստատելը, դատարանների պահուստային ֆոնդերի բաշխումը և մի շարք այլ գործառույթներ¹²:

Այս առումով մտահոգություններ կան նաև Խորհրդի կողմից դատավորների ընտրության գործընթացի առնչությամբ ևս:

Չնայած ներպետական օրենսդրությունը սահմանում է դատավորների թեկնածուներին ներկայացվող հստակ և օբյեկտիվ չափանիշներ ու պահանջներ, այնուհանդերձ, դատավորների ընտրության կազմակերպման պրակտիկան վեր է հանել խնդիրներ՝ կապված հատկապես դատավորի պաշտոնում նշանակված առանձին անձանց բարեվարքության հետ:

¹² ՀՀ Դատական օրենսգիրք, 2018թ, հոդված 89

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՏՈՒԳՈՒՄ

2020 թվականին Հայաստանի Հանրապետությունում ներդրվեց բարեվարքության ստուգման ինստիտուտը, որի կարգավորումները սահմանված են ՀՀ Դատական օրենսգրքով և Կոռուպցիայի կանխարգելման մասին օրենքով: Բարեվարքության ստուգումը կենտրոնական դեր զբաղեցրեց դատավորների պաշտոնի նշանակման գործընթացում, որի նպատակն է առավել բարեվարք և կոռուպցիայից զերծ համակարգի ձևավորում՝ դատավորների թեկնածուների համապատասխան որակների ստուգման միջոցով:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին օրենքի համաձայն՝ *Բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում լրացման ենթակա են հետևյալ տվյալները՝*

- 1) թեկնածուի և «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով նրա ընտանիքի անդամների գույքային դրության՝ գույքի և եկամտի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն.
- 2) թեկնածուի կրթության, աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, այդ թվում՝ ուսումնական հաստատության, աշխատավայրի (նախկին և ներկա) անվանումը (անվանումները), զբաղեցրած պաշտոնը (պաշտոնները).
- 3) քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու վերաբերյալ տեղեկատվություն.
- 4) «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց հետ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով մերձավոր ազգակցությամբ և խնամիությամբ կապված լինելու վերաբերյալ տեղեկատվություն.
- 5) քրեական ենթամշակույթին հարելու վերաբերյալ տեղեկատվություն¹³:

¹³ ՀՀ Օրենքը Կոռուպցիայի Կանխարգելման հանձնաժողովի մասին, հոդված 26.1

Նույն օրենքի համաձայն՝ Բարեվարքության ուսումնասիրությունը ներառում է՝

- 1) բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում ներկայացված տվյալների արժանահավաստության ստուգում.
- 2) անձի կողմից նախկինում քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքի, այդ թվում՝ կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության, նրա կողմից վարքագծի կանոնների պահպանման, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների խախտում կատարած լինելու հանգամանքների ուսումնասիրություն.
- 3) անձի վերաբերյալ զանգվածային լրատվական միջոցներում, ինչպես նաև սոցիալական ցանցերում հրապարակված տեղեկությունների ուսումնասիրություն.
- 4) անձի գույքային դրության՝ փաստացի ստացած եկամուտներին համապատասխանության, ինչպես նաև նախկինում ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրություն.
- 5) անձի աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրություն.
- 6) անձի քրեական ենթամշակույթին հարելու հնարավորության ուսումնասիրություն:

Բարեվարքության ստուգման արդյունքներն ու Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ըստ այդմ տրվող եզրակացությունները հետագայում հաշվի են առնվում Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորների հավակնորդների ցուցակը կազմելիս:

Իսկ ահա Դատական օրենսգրքի 108-րդ հոդվածի համաձայն՝ դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակը կազմելու համար քվեարկությունն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անդամները հաշվի են առնում որակավորման գրավոր քննության եւ հարցազրույցի արդյունքները, հոգեբանական թեստի արդյունքները եւ հավակնորդի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:

Վերջին երկու տարում Խորհրդի կողմից դատավորների թեկնածուների ցուցակի կազմման և վերջնարդյունքում դատավորների պաշտոնի նշանակման գործընթացը ցույց է տվել, որ առանձին դեպքերում դատավորի պաշտոնում նշանակվել են նաև անձիք, որոնց վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրվել է բացասական եզրակացություն: Հանրության և քաղաքացիական հասարակության կողմից դժգոհության առաջացած առավել հիշարժան նշանակումներից մեկը վերաբերում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի նախագահի նշանակմանը Բարձրագույն դատական խորհրդի կողմից, ով հայտնի է եղել առավել հնչել գործերով իր պաշտոնավարմամբ և ինչպես պարզ է դարձել մամուլից՝ դրական գնահատական չի ստացել, երբ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, միջազգային փորձագետի և հասարակական կազմակերպության կողմից կազմակերպվել է նրա բարեվարքության՝ կենսագրության, կապերի, գործունեության և ունեցվածքի ստուգում¹⁴: Նման գործելաճ Խորհրդի կողմից նկատվել է նաև նորաստեղծ հակակոռուպցիոն դատարանի ձևավորման պարագայում¹⁵:

Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ստեղծման նպատակը կոռուպցիոն բնույթի գործերով մասնագիտացված քննությունը երկրում նոր հարթակի վրա դնելն ու կոռուպցիայի դեմ իրականացվող պայքարի արդյունավետության աստիճանը բարձրացնելն էր¹⁶:

¹⁴ <https://www.azatutyun.am/a/32247644.html>

¹⁵ Զեկույց. Հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը Հայաստանի Հանրապետությունում <https://prwb.am/2023/06/20/zekuyc-7/>

¹⁶ ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2019–2022 թվականների միջոցառումների ծրագիր

Մինչդեռ նորաստեղծ դատարանում բարեվարքության բացասական եզրակացությամբ կադրերի նշանակումը կասկածի տակ է դնում այդ դատարանի նպատակային գործունեությունն ու ազդում վերջինիս հանրային վստահության վրա: Քանի որ դատարանի արդյունավետ և նպատակային գործունեության կարևորագույն երաշխիքներից մեկը բարեվարք դատավորներն են: Ավելին, պետական մեկ մարմնի կողմից մեկ այլ մարմնի տրամադրած եզրակացությունը շրջանցելը ստվեր է գցում նաև բարեվարքության ինստիտուտի և մասնավորապես ստուգման իրականացնող մարմնի վրա:

Խոսելով բարեվարքության ինստիտուտի մասին, պետք է ուշադրություն դարձնել նաև 2022–2026 թթ ռազմավարությամբ այս առնչությամբ նախատեսված կարգավորումներին: Որպես դրական տեղաշարժ պետք է նշել այն հանգամանքը, որ 2022–2026թթ ռազմավարության քրեաիրավական ոլորտի բարեփոխումների՝ որպես առանձին ռազմավարական ուղղության ներքո, նախատեսված է նաև բարեվարքության ստուգման կառուցակարգերի նախատեսումը¹⁷:

Մասնավորապես, քննչական մարմինների համակարգի բարեփոխման նպատակով սահմանվել է քննիչների թեկնածուների և առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց բարեվարքության ստուգման կառուցակարգերի ձևավորում: Հարկ է նշել, որ այն արդեն գործում է հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների առնչությամբ:

Նմանապես, ռազմավարությամբ նախատեսվել է նաև դատախազների բարեվարքության ամրապնդումը՝ որպես դատախազական համակարգի բարեփոխման կարևոր նախադրյալ: Ռազմավարությամբ սահմանվել է, որ անհրաժեշտ է ապահովել դատախազների բարեվարքությունը նրանց գործունեության ողջ ընթացքում, ինչը հնարավոր է երաշխավորել միայն որոշակի պարբերականությամբ իրականացվող ստուգումների միջոցով, երբ կիրականացվի նրանց գույքային դրության, անհամատեղելիության պահանջների պահպանվածության, շահերի բախման իրավիճակների, այլ սահմանափակումների և օրենքով նախատեսված այլ պահանջների և տեղեկատվության ստուգում:

¹⁷ https://www.arlis.am/Annexes/6/2022_N1133hav.1.pdf



ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն դատական խորհրդի գործառույթների մեջ կարևորագույն դերակատարում ունի նաև դատավորների կարգապահական պատասխանատվությունը:

Դատավորների կարգապահական պատասխանատվության ինստիտուտը դատական իշխանության անկախության եւ արդյունավետության ապահովման կարևորագույն հարցերից մեկն է, ինչը մանրամասն կարգավորում է ստացել ինչպես ներպետական օրենսդրությունում, այնպես էլ միջազգային չափանիշներով: Այդ կարգավորումներում առանձնակի կարեւորություն ստանում են կարգապահական պատասխանատվության հիմքերը, պատասխանատվության ենթարկող մարմիններն ու վերջիններիս ձևավորման կարգը, իրավասությունների շրջանակը, կայացվող որոշումների հիմնավորվածությունն ու ողջ գործընթացի օրինականությունը:

Այս առնչությամբ վերջին տարիներին արձանագրված հիմնական խնդիրները վերաբերել են դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պրակտիկ դրսևորումների և մասնավորապես Խորհրդի կողմից կայացված որոշումների համաչափությանը:

2023 թվականին արձանագրվել կարգապահական պատասխանատվության գործերով դատավորների լիազորությունների դադարեցման մի շարք դեպքեր, որոնց պարագայում Խորհրդի կողմից որոշված պատասխանատվության միջոցը համաչափության տեսանկյունից խնդրահարույց է: Օրինակ, նման գործերից մեկով վարույթի հարուցման հիմք է հանդիսացել այն, որ դատավորը հրապարակային կարծիք է հայտնել Բարձրագույն դատական խորհրդում քննվող գործի վերաբերյալ: Ըստ վարույթ հարուցող մարմնի՝ դատավորը որոշման եզրափակիչ մասին հրապարակումից հետո հրապարակայնորեն կասկածի տակ է առել տվյալ դատական ակտը և դատարանի

գործողությունները¹⁸: Նմանատիպ մեկ այլ գործով կարգապահական պատասխանատվության վարույթի հարուցման հիմք է հանդիսացել այն, որ դատավորը հրապարակային կարծիք է արտահայտել այն մասին, որ Խորհրդի անդամներն իրենց որոշումները կայացնելիս անկախ և անաչառ չեն՝ կաշկանդված լինելով որոշակի ուղղորդումներով կամ ցուցումներով¹⁹: Նշված գործերով, չնայած որ առկա են դատավորների կողմից վարքագծի կանոնների խախտման դրսևորումներ, այնուհանդերձ, դատավորների լիազորությունների դադարեցումը խնդրահարույց է դիտարկվում:

ԴԱՏԱՎՈՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ԿԱՐՈՒՑԵԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

«Ը Դատական օրենսգիրքը սահմանում է, որ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեն՝

- էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը
- լիազոր մարմինը, այն է՝ Արդարադատության նախարարությունը

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ օրենքով նախատեսված դեպքերում

Պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ վերջին շրջանում առավել շատ վարույթներ հարուցվել են «Արդարադատության նախարարության կողմից:

2020 թվականին Արդարադատության նախարարության կողմից ներկայաց-

¹⁸ Բարձրագույն դատական խորհուրդ , ԲԴԽ-20-Ո-Կ-9
¹⁹ Բարձրագույն դատական խորհուրդ , ԲԴԽ-57-Ո-Կ-16



վել է 13 միջնորդություն, Դատավորների ընդհանուր ժողովի էթիկային և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից՝ 5 միջնորդություն:

2021 թվականին հարուցված վարույթների թիվը աճել է, որտեղ կրկին մեծամասնություն է կազմել Արդարադատության նախարարության կողմից ներկայացվող միջնորդությունների թիվը, այն է՝ 18, էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից ներկայացված միջնորդությունների թիվը եղել է 6, իսկ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված միջնորդությունների թիվը՝ 4²⁰:

2022 թվականի համար պատկերը եղել է այսպիսին՝ Արդարադատության նախարարության կողմից՝ 18, էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից՝ 5 և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից՝ 1 միջնորդություն²¹:

Արդարադատության նախարարության կողմից ներկայացվող միջնորդությունների թիվը և դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պրակտիկան դատական համակարգում լուրջ մտահոգությունների տեղիք է տվել²²: Ինչը արձանագրվել է նաև 2021 թվականին Եվրոպայի խորհրդի հակակոռուպցիոն մարմնի (GRECO) զեկույցի մեջ:

Մասնավորապես, խոսելով դատական իշխանության մասին՝ GRECO-ն նշել է՝ «Ինչ վերաբերում է դատական համակարգին, ապա արդարադատության նախարարի դերը դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներում չի դադարեցվել, և ներկայիս իրավիճակը անհամատեղելի է դատական համակարգի անկախության հետ: Դատավորների աշխատանքի ընդունման և առաջխա-

²⁰ <https://iravaban.net/405356.html>
²¹ https://court.am/storage/uploads/files/news/_%D4%B7%D5%A9%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%20%D6%87%20%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%B0%D5-A1%D6%80%D6%81%D5%A5%D6%80%D5%AB%20%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B1%D5%B6%D5%A1%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE.pdf
<https://prwb.am/wp-content/uploads/2023/09/%D4%B4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BD%D5%AD%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81-1.pdf>
²² <https://hetq.am/hy/article/157865>

ղացման վերաբերյալ որոշումների համար առկա են բողոքարկման ճիշտ մեխանիզմներ, սակայն դրանք չկան ազատման որոշումների համար...»²³:

Այս առնչությամբ սակայն պետք է հղում կատարել նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից դեռևս 2019 թվականին ՀՀ առնչությամբ տրամադրված կարծիքին: Խոսելով Արդարադատության նախարարի կողմից դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորության մասին, Վենետիկի հանձնաժողովը գտել է, որ նախարարին տրված նման լիազորությունը վիճելի չէ, քանի որ վերջինս դերակատարում չունի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերջնական որոշման կայացման հարցում: Արդարադատության նախարարության նման լիազորությունը հնարավոր կլինի վերացնել այն դեպքում, երբ էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովը լիարժեք աշխատում է²⁴:

Պետք է նշել, որ էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի գործունեությունը դեռևս չի բավարարում արդյունավետության այն պահանջներին, որոնք բխում են վերջինիս նպատակներից, ինչով պայմանավորված՝ պրակտիկայում երբեմն ձևավորում է հանձնաժողովի կողմից կորպորատիվ շահի սպասարկման առնչությամբ մտահոգություններ: Նման պայմաններում, դեռևս նկատվում է անհրաժեշտություն պահպանել Արդարադատության նախարարին տրված՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթ հարուցելու լիազորությունը:

Հատկանշական է, որ համանման մոտեցում արտահայտվել է նաև ՀՀ դատաիրավական ոլորտի բարեփոխումների առնչությամբ Համաշխարհային Բանկի կողմից պատրաստված զեկույցում²⁵:

²³ Group of states against Corruption, Fourth evaluation round, Corruption prevention in respect of members of parliament, judges and prosecutors, Interim compliance report Armenia, 2021 <https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680a3fcad>
²⁴ European Commission for Democracy Through Law (Venice Commission) Armenia Draft Joint Opinion of The Venice Commission and The Directorate of Human Rights (Dhr) Of The Directorate General Of Human Rights And Rule Of Law (Dgi) of The Council Of Europe On The Amendments To The Judicial Code And Some Other Laws, 2019 [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdfFile=CDL\(2019\)030-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdfFile=CDL(2019)030-e)
²⁵ Supporting Judicial Reforms in Armenia: A Forward Look Public Expenditure and Performance Review of the Judiciary in Armenia, 2023



Խոսելով կարգապահական պատասխանատվության մասին՝ որպես դրական զարգացում պետք է ներկայացնել էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կազմի փոփոխությունը, ինչը բխում է նաև 2022–2026 թթ Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությունից: Այսպես, ռազմավարության համաձայն՝ ներկայումս դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը կազմված է 8 անդամներից, որոնցից ոչ դատավոր անդամների թիվը սահմանափակվում է 2–ով: Արդյունքում, սակայն, դատավոր անդամները, միևնույնն է, ունենում են գերակշիռ մասնակցություն հանձնաժողովի կազմում և դրա որոշումների կայացման ընթացքում: 2017 թ.–ի հոկտեմբերին Դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ տրված կարծիքում Վենետիկի հանձնաժողովը ընդգծել է էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում կորպորատիվ մոտեցում որդեգրելու ռիսկերը՝ առաջարկելով հանձնաժողովի կազմի հավասարակշռումը ոչ դատավոր անդամների ընդգրկման միջոցով²⁶: Ինչով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել վերանայել դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հանձնաժողովում որոշումների կայացման գործընթացում ոչ դատավոր անդամների ձայների կշիռը:

Արդեն իսկ կատարված փոփոխություններով հանձնաժողովի կազմը դառնում է 11, որտեղ ոչ դատավոր անդամների թիվը դառնում է 5²⁷:

Նմանապես, դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի առնչությամբ որպես դրական ձեռքբերում պետք է դիտարկել նաև ռազմավարությամբ նախատեսված՝ Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական գործերով որոշումների բողոքարկման իրավական հնարավորության նախատեսումը:

2023 թվականին կատարված օրենսդրական փոփոխություններով արդեն

²⁶ CDL–AD(2017)019 [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL–AD\(2017\)019–e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL–AD(2017)019–e)
²⁷ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական Օրենքը «Հայաստանի Հանրապետության Դատական Օրենսգիրք» Սահմանադրական Օրենքում Լրացումներ Եվ Փոփոխություններ Կատարելու Մասին, <https://www.e-draft.am/en/projects/5955>

իսկ նախատեսվել է Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական գործերով որոշումների բողոքարկման իրավական հնարավորությունը:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունն իրականացնելու է ԲԴԽ 4 անդամ ընդգրկող կազմը: ԲԴԽ նշված կազմը յուրաքանչյուր կարգապահական վարույթով լինելու է տարբեր եւ ընդգրկելու է դատավորների ընդհանուր ժողովի եւ ԱԺ–ի կողմից ընտրված երկուական թեկնածու: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշման դեմ բերված բողոքի քննությունն իրականացնելու է ԲԴԽ–ն՝ տվյալ կարգապահական վարույթով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության կազմում չընդգրկված անդամների կազմով²⁸:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՐՄԻՑ ԶԵՎԱՎՈՐՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Բացի էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովից, ՀՀ–ում գործում են նաև Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ձևավորվող այլ հանձնաժողովներ ևս:

Այսպես, դատական օրենսգրքի համաձայն դատավորների ընդհանուր ժողովը ձևավորում է էթիկայի և կարգապահական, ուսումնական հարցերի, ինչպես նաև Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովներ²⁹:

Ինչպես էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի պարագայում, այնպես էլ մյուս երկու հանձնաժողովներում բացի դատավոր անդամներից նախատեսված է նաև ոչ–դատավոր անդամների մասնակցություն, ինչը քաղիասարակության մասնակցության ապահովման տեսանկյունից հատկապես դրական է գնահատվում:

²⁸ Խորհրդարանը երկրորդ ընթերցմամբ քննարկել է մի շարք օրենսդրական նախաձեռնություններ <http://www.parliament.am/news.php?catid=2&NewsID=19487&year=2023&month=10&day=24&lang=arm>
²⁹ ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 77

Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը կազմված է հինգ անդամից, որոնցից երեքը՝ դատավոր անդամներ, երկուսը՝ իրավաբան գիտնականներ: Ուսումնական հարցերի հանձնաժողովը կազմված է յոթ անդամից, որոնցից հինգը՝ դատավոր անդամներ, երկուսը՝ դատավոր չհանդիսացող անդամներ³⁰:

Համաձայն Դատական օրենսգրքի կարգավորումների՝ ուսումնական հարցերի հանձնաժողովը՝ հաստատում է դատավորների վերապատրաստման կարգը, դատավորի թեկնածուների հավակնորդների գնահատման համար առաջարկում է դատավորի թեկնածություն՝ նրա համաձայնությամբ, դատավորների, դատավորների թեկնածուների հավակնորդների և դատավորների թեկնածուների ուսուցման ծրագրերում ներառելու նպատակով Արդարադատության ակադեմիա է ներկայացնում առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ առաջարկություններ, Արդարադատության ակադեմիա է ներկայացնում հաջորդ տարվա ընթացքում վերապատրաստման ենթակա անձանց ցուցակը՝ առարկայական կուրսերի ընտրության նշումով, սահմանում է դատավորների, դատավորների թեկնածուների հավակնորդների և դատավորների թեկնածուների ուսումնառության ժամաքանակը, Արդարադատության ակադեմիային առաջարկում է դատավորների թեկնածուների հավակնորդների փորձաշրջանի ղեկավարներ:

Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովն իրականացնում է դատավորների գործունեության գնահատումը, Դատական օրենսգրքի 142-րդ հոդվածով սահմանված՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտում կամ դատավորի վարքագծի կանոնների խախտում (այդ թվում՝ էական կարգապահական խախտում) հայտնաբերելու դեպքում դիմում է էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու համար:

Դատավորների անհատական գնահատումը հասկացվում է որպես առանձին դատավորների մասնագիտական աշխատանքի և կարողությունների գնահատումը: Այն ուղղակիորեն կապվում է տվյալ երկրում արդարադատության որակի հետ:

³⁰ Նույն տեղում

Որպես ընդհանուր մոտեցում, դատավորների անկախությունը պահպանելու նպատակով գնահատումը պետք է իրականացվի դատավորների կողմից: Գնահատման գործընթացին կարևոր դերակատարում կարող են ունենալ տվյալ երկրում գործող դատական խորհուրդները³¹: դատավորների գնահատման գործընթացին կարող են մասնակցել այլ մասնագետներ, որոնք կարող են օգտակար ներդրում ունենալ այդ գործընթացում: Այս համատեքստում կարևոր պահանջը այն է, որ այդ մասնակիցները դատական համակարգի վերաբերյալ բավարար գիտելիք և փորձառություն ունենան:

«Ներդրված գնահատման հանձնաժողովի կազմը որպես այդպիսին համահունչ է ընդունված մոտեցումներին, սակայն հաշվի առնելով գնահատման կարևորությունն ու նպատակները, ինչպես նաև որոշումների կայացման օբյեկտիվությունը, անհրաժեշտություն է նկատվում ընդլայնել Գնահատման հանձնաժողովի կազմը ևս՝ մեծացնելով ոչ դատավոր անդամների թիվը:

Ըստ այդմ, որպես էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կազմի վերանայման տրամաբանական շարունակություն, անհրաժեշտ է վերանայել գործող բոլոր հանձնաժողովներում ոչ դատավոր անդամների թիվը՝ ավելի մեծ հնարավորություն տալով ոչ-դատավոր անդամների մասնակցությանը: Այս առումով, կարևոր է, որ հանձնաժողովներում ներգրավվեն ոչ միայն իրավաբան-գիտնականները, այլ նաև հասարակական կազմակերպությունների ոլորտային ներկայացուցիչները

³¹ Եվրոպայի Դատավորների Խորհրդատվական Խորհուրդ, ԵԴԽԽ թիվ 10 (2007) կարծիքը

ԱՄՓՈՓՈՒՄ

Ինչպես կարելի է նկատել, վերջին երեք տարիներին ՀՀ-ում կատարվել են դատաիրավական ոլորտին վերաբերող ինչպես դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությունից ուղղակիորեն բխող, այնպես էլ համակարգին առնչվող այլ փոփոխություններ: Իսկ դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված գործողությունների մեծ մաս դեռևս ընթացքի մեջ է: Այս ընթացքում արձանագրվել են ինչպես դրական փոփոխություններ, այնպես էլ բացթողումներ և խնդիրներ:

Առավել մտահոգության տեղիք տվող հարցերից մեկը վերաբերում է դատական համակարգը մաքրելուն ուղղված համակարգային մոտեցման բացակայությանը, որը այդպես էլ կյանքի չի կոչվել: Նմանապես, խնդրահարույց է անցումային արդարադատության և փաստահավաք գործունեության միջոցով մարդու իրավունքների համակարգային խախտումների բացահայտման ուշացումը:

Դատական և իրավական համակարգի կարևոր ձեռքբերումներից է համարվում բարեվարքության ինստիտուտի ներդրումը, ինչը սակայն լավագույն կաշխատի և արդյունք կտա, երբ բարեվարքության ստուգման արդյունքում կայացված եզրակացությունների նկատմամբ որոշում կայացնող մարմինները ցուցաբերեն հետևողականություն:

Շարունակում է նաև խնդրահարույց մնալ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պրակտիկան, որտեղ արձանագրված առավել լուրջ խնդիրները կապված են Խորհրդի կողմից կայացվող որոշումների համաչափությանը և մասնավորապես դատավորների լիազորությունների դադարեցման դեպքերի հետ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Արդարադատության նախարարության կողմից հետևողականություն ցուցաբերել Դատական և իրավական բարեփոխումների գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումները ժամանակին և արդյունավետ կերպով իրականացնելու հարցում:

Ռազմավարությունից բխող օրենսդրական փոփոխությունները քննարկման դնել քաղաքացիական հասարակության հետ և հետևողականություն ցուցաբերել ներկայացվող առաջարկությունների առնչությամբ:

Առանձին նպատակների և ուղղությունների ներքո նախատեսված գործողությունների յուրաքանչյուր ձախողման կամ հետաձգման դեպքում ներկայացնել հիմնավոր բացատրություններ չկատարման կամ հետաձգման պատճառների վերաբերյալ:

Վերանայել Բարձրագույն դատական խորհրդի ոչ դատավոր անդամների ընտրության պրակտիկան՝ բացառելով գործադիր կամ օրենսդիր մարմնի ներկայացուցիչների, ինչպես նաև քաղաքական հարում ունեցող թեկնածուների ընտրությունը Խորհրդում:

Բարձրագույն դատական խորհրդի ոչ դատավոր անդամների թեկնածուների առաջադրումը կազմակերպել արժանիքահեն ընտրության և օբյեկտիվ չափանիշների հիման վրա:

Բացառել Խորհրդի կողմից բացասական բարեարքության գնահատմամբ դատավորների թեկնածուների նշանակումն ու առաջխաղացումը դատական համակարգում:

Օրենսդրորեն ամրագրել Բարձրագույն դատական խորհրդի կողմից այս առնչությամբ կայացվող որոշումների պարտադիր պատճառաբանված լինելու պահանջը:

Օրենսդրորեն ամրագրել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կայացվող բարեարքության գնահատման եզրակացությունների եզրափակիչ մասը հրապարակային դարձնելու պահանջ:

Պրակտիկայում ապահովել, որ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ցանկացած որոշում պարունակի լիարժեք պատճառաբանություն և հիմնավորում ընտրված կարգապահական պատասխանատվության միջոցի տեսակի առնչությամբ:

Վերանայել դատավորների Ընդհանուր ժողովի ներքո ձևավորված Գնահատման և Ուսումնական հարցերով հանձնաժողովի կազմերը՝ մեծացնելով ոչ դատավոր անդամների մասնակցության հնարավորությունը նման հանձնաժողովներում: Այս նպատակով, ապահովել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավվածությունը հանձնաժողովների կազմում

Փաստահավաք առաքելության արդյունավետ կյանքի կոչման համար մշակել Հանրային խորհրդի նոր կազմի ձևավորման հստակ չափանիշներ և անդամներին ներկայացնող պահանջներ, ինչպես նաև նախատեսել Խորհրդի անկախ և արդյունավետ գործունեության երաշխիքներ: